




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱԿԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՆ Է ԳՐՈՒԹԻՒՆԿ  
ՊԵՏԷ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ  
Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ ԻՐԱՎԻ  
ԳԱՇԻՐԷ (Հասցեագրված)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒՊՏՈՍԱՆ ՀԱՍՏԻՔ	
Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ	» 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	» 12

ՔԱՅԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԵԿ Է  
ՆՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՇԱՐՔԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր:

### ԱՆԵԼ ՈՒՂԻՆ

Երբ մեր նախորդ թիւերով Ազգային Սահմանադրութեան հեղինակներուն, կազմութեան թուականին, օգտակարութեան ասանոր գործադրութեան հանդէպ հանուած անթուերի խոչնդաններուն վրայ համառօտակի ակնարկներ կը նետէինք, կարեոր հարց մը կը ներկայանար մեզ. ա՛յն էր, Եգիպտոսի հայութեան մէջ կարգ մը ժողովականներու սանձարձակ ու արհամարհոտ վարմունքը դէպ ի ժողովուրդը:

Եգիպտոսահայոց ասորած միջավայրը, դատակարարութեամբ աշխատողները և այդ իսկ պատճառաւ հայ անհատներու մէջ անխուսափելի դարձած յարաբերական ճշգրտուն վիճակը, թէև հեռավորէր պիտի յառաջանէին քայքայումը սահմանադրական սկզբանց, սակայն այս սկզբունքները իրենց գոյութեան սկզբնաւորութենէն ի վեր դատարարականութեան հետ զօրացած, բարքերու հետ զարգացած և խոր արմատներ ձգած էին հայ սրտերու և զգացմանց մէջ:

Ստոյգ է որ Եգիպտոսի հայութիւնը՝ ժամանակէ մը ի վեր լուծիւն պահելով, կարծեցնել կուտար իր անհատական ձայնի իրաւունքները կապուել ուղղ ժողովականներուն թէ ինք գէպ ի անյատակ վիճ մը ուղղած է իր քայլերը, սակայն այսօր «չը յիշուի» ամենապարզ խնդիր մը ահաւասիկ շարժառիթ կը լինի ցնցելու և սթափման հրաւիրելու հայ ժողովուրդը, որպէս զի Արգոսի սչերով գիտէ իւր շուրջ անցած դարձածները և մանաւանդ սրտապէս երևան բերէ իր ժողովականներուն նախաւանմանադրական և պախարակելի ընկալքը:

«Չը յիշուի» խնդիրը քանի մը բառերու մէջ իսկ կրնանք ամփոփել:

Հայ ժողովուրդը, վերջին քառասորդ դարուն մէջ, ազատասիրութեան վեհ զգացումներէ սողորուած, և զգուած մանաւանդ իր վրայ ի գործ դրուած բռնապետական փորձերէն, զօրաւոր ձգտումներ ունէր գործադրելու ծրագիր մը, որը սրուազծած էր իր գաղափարին մէջ:

Նկարագիրէ բուրբովին զուրկ Սրմանեան Պատրիարքը, իր կրօնական ու քաղա-

քական կրկին հանգամանքներով, փոխանակ զօրավիզ մը հանդիսանալու ազգային կենսական շահուց, իր ազգափնաս և կրնայ ըսուիլ գաւառանի արարքներովը ցոյց արուա իրեն մէջ մարմնացած ստրուկի ցած հագին:

Ինքզինքը լիկ փառքի ու հանդստի նուիրած այս մարդամեքենային ազգագաւարարքները արդի զարգացած հայութիւնը մարսել չուզեց և իւր սրտին ու հոգւոյն միսթարութիւնը հայթայթող սրբավայրէն — Եկեղեցիէն — արտաքսել ուզեց անոր անունը:

Ոչ ոք անտրամաբանական պիտի համարի կարծենք հայութեան ունեցած այս գովելի նախանձախնդրութիւնը, որովհետև պէտք է ընդունիլ թէ, եթէ Պատրիարքի մը անուան յիշատակութիւնը նշանակալից է, ինչպէս ոմանք հզօրապէս համուզուած են, ուրեմն անոր դադարումն ալ բոլորովին անարժէք և նշանակութենէ զուրկ չէ:

Այս հարցն է ահաւասիկ, որ սուր կերպարանք մը ստացած է այսօր Գահիրէի Հայոց մէջ և փորձաքարը կը դառնայ կարգ մը դիմակաւորներու, որոց ընթացքին ու գործերուն մօտէն ծանօթանալու շատ պէտք ունէր Եգիպտաբնակ հայութիւնը, իւր քայլերն զգուշացնելու համար կորուստի այն շաւղէն, որ դէպի խորխորատը պիտի առաջնորդէր զինքն:

— Բայց ի՞նչ ըսենք մեր սակաւթիւ աղանջներուն, որոնք չեն ուզեր սերտել ազգային ներկայ վիճակը, հանգամանքներն և ժողովուրդի իրաւասութեան սահմանը, ու գաւակիցը կը դառնան մէկուն, որ հանրութեան զգուանքին արժանացած է և միահամուռ բողբոքի ձայնը բարձրացնելու առիթ տուած: Այսպիսի անարգարանայի յետագիմական շարժում մը, չենք գիտեր թէ մեր աղանջներու պարտուց թէ իրաւանց կողմը պէտք է արձանագրել:

Եգիպտաբնակ հայերուն շատերը գիտեն թէ ասկէ առաջ 1892 Հոկտեմբերին քուէարկութիւն կատարուած է և ըստ օրինի Սահմանադրութեան՝ Երեսփոխան ժողովը ընտրուած: Բո՛ւ է մեր արդի ժողովականք կէտ առ կէտ պարտական էին հպատակիլ զիրենք պաշտօնի կոչող օրինազրիկ արամադրութեանց. սակայն դժբաղդութիւն մը պիտի ըլլայ խոտովանել թէ, ց'այս-

սօր երբէք չեն ուզած արգարացնել իրենց վրայ դրուած յոյսերը:

Ասոնցմէ ոմանք Առաջնորդարանի անթուներուն սիրահար, անկախանելի մնալ կ'ուզեն անկէ և կը մոռնան ի՞նչ երկու տարին անգամ մը պէտք էր որ իրենց մէկ հինգերորդը (երեք անգամ) վիճակաւ դադարէին և անոնց տեղ նորեր ընտրուէին:

Եթէ մեր ազգային օրինաց այս տրամադրութիւնը ի գործ դրուէր, եօթն տարիներ առաջ ընտրուած 16 երեսփոխաններէն ինն հատին տեղ նորեր ընտրուած պիտի ըլլային այսօր և օրինաց արամադրութիւնն ալ յարգուած պիտի ըլլար:

Երեսփոխանական ժողովէն բղխած Գաղաք ժողովին մէջ չ'պիտի սպրդէին օտարահպատակներ, ինչպէս նախատեսուած է Սահմանադրութեան օրինաց մէջ, և առաջին զանցառութեան վրայ չ'պիտի աւելնար ուրիշներ:

Ազգային զգացումէ ինչպէս նաև առանցիկ դատարարականութենէ զուրկ անարժաններ չ'պիտի կարենային ստրով գըլխով միտուիլ իրենց անձանօթ ազգային գործոց մէջ, վասն զի անոնց միջամտութիւնը գրական օգուտ մը չ'արտադրելէ զատ, իրենք ալ գըլխովին վնասակար տարր մը կը բնան դառնալ հայութեան զըլին:

Ասոնց նման դեռ շատ մը պեղծումներ կրնանք թուել, որոնք բացարձակապէս քրնանագատելի կընեն Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն ընտրուած ժողովականներու արարքները:

Կ'ստիպուինք յայտարարել թէ ներկայ պարագայից մէջ իրենց ընտրած այս ուղին անել է:

Ահաւասիկ թարգմանութիւնը այն յօդուածէն զոր Մուգաքքաւ արար. թերթը հրատարակած է նախորդ կիրակի Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած միջադէպին և ձերբակալութեանց մասին:

### ՀԱՅՎԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ (1) ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Սոյն խնդրոյ (պատրիարքական) մասին հաւատակութիւնը կը սաստկանայ քաղաքս գտնուող Հայոց միջու, անանկ որ կը վախցուի թէ ծանր

1) Աստ Եկեղեցւոյ մէջ պատարագի ատեն Օրմանեան Պատրիարքի անուան յիշատակութեան խնդրոյն կ'ակնարկուի:

(\*) Մարտէյի Արմենիա թերթին վարժապետ խմբագիրն ալ այս թուականներուն կ'ապրէր . . .

հետեւանքներ ունենայ. ուստի յայդով լուծվին պահել այլ ևս բանաւոր չէ:

Յայտնի է թէ թուրքիոյ հայերէն շատերը հայկական ջարդերէն յետոյ աստ և Աղեքաանդ-բիա գաղթեցին և ցարդ յիշեալ երկու քաղաք-ներուն մէջ կը բնակին: Հայերը քաղաքին մէջ երկու ժողովներ ունին. մին երեսփոխանական և միւսը քաղաքական: Երեսփոխանական ժողովոյ ատենապետն է Վսեմ. Տիգրան փաշան և ան-դամները ասան և մէկ հոգիէ կը բաղկանան, ու-րոնցմէ մին է արտաքին գործոց պաշտօնաներէն Կարապետ պէյ Շէրիտեան, որ ժողովոյն զեւ-նագիրն է միանգամայն Ջրի ընկերութեան պաշ-տօնաներէն Սիդրակ էֆ. Դաւիթեան և Իսկէն-տէր էֆ. Հոգեւորնի ևս անդամ են, իսկ միւս անգամներն են եկեղեցւոյն երկու քահանաները և քաղաքին վաճառականներէն ունանք:

Հինգ հոգիէ կը բաղկանայ Քաղաքական ժո-ղովը, որոյ ատենապետն է Ջինոր պէյ: Անցեալ-ները պատմեցինք թէ գաղթականները հանրագիր մը գրկած են Քաղաքական ժողովոյ՝ պահանջե-լով որ Օրմանեան Պատրիարքի անունը պատարա-գի մէջ չյիշուի, ինչպէս որ սովորութիւն է: Վսեմ զի Սուլթանին թելադրութեամբը նամակ մը գը-րած է (2), որուն մէջ ըսած է թէ Հայերը հան-գիստ և ապահով են՝ գիտնալով հանգերձ թէ Հա-յերը հանգստութենէ, անդորրութենէ զուրկ՝ ա-նապահով և թշուառ վիճակի մէջ կը գտնուին:

Քաղաքական ժողովը հանրագիրն ստորա-գրութիւնները յննեց նախ և տեսաւ թէ ստո-րագրողներէն ոմանք անչափահաս պատանիներ էին, ոմանք անուանին քանի մը անգամ ստորա-գրած, և ոմանք ալ հայ հասարակութենէն չէին (3): Ուստի ժողովը երեք շաբաթ առա՝ ստո-րագրողներուն կողմէն կարգուած չորս պատգա-մաւորները հրաւիրեց և խորհուրդ տուաւ իրենց նպատակէն ու որոշումէն ետ կենալ ժողովը ա-նոնց իւրաքանչիւրին անունը, բնակութեան տեղը և արհեստը հարցուց և պատասխաններն արձու-նագրեց, որպէս թէ այդ մասին լուրջ տնօրինու-թիւն մ'ընելու մտադիր էր:

Յետոյ անոնց հարցուց թէ հանրագիրը ստո-րագրողներուն համար պատասխանատուութիւն յանձն կ'առնե՞ն. անոնցմէ մին մերժեց (4), իսկ միւս երեքը պատասխանատուութիւնը վրանին առին: Այս բանը ուրբաթ օրը տեղի կ'ունենար Առաջնորդարանին մէջ: Յաջորդ կիրակին քահա-նան պատարագի ատեն յիշատակեց Պատրիարքին անունը, ներկայ եղող գաղթականներէն ոմանք ասոր զեմ գիտողութիւն ըրին եկեղեցւոյ մէջ:

Յետոյ երբ գուրս եղան, եկեղեցւոյ բակը քա-հանային հետ վէճի բռնուեցան: Նախորդ կի-րակին դարձեալ միւսնոյն բանը տեղի ունեցաւ և մէջերնին վէճը սաստկացաւ եկեղեցւոյ բակին մէջ, անանկ որ Տէր Մամբէ քահանայն, որ Ա-ռաջնորդարանի փոխ-տեղապահն է, բարկանալով՝ գաղթականներէն միոյն երկու ապտակ իջեցուց:

Անցեալ ուրբաթ օր Քաղաքական ժողովը Ա-ռաջնորդարանին մէջ ի նիստ գումարեցաւ, և Ե-րեսփոխանական ժողովէն Կարապետ Պէյ Շէրիտե-ան և ուրիշներ ներկայ գտնուեցան, և սոյն խնդրոյ մասին խորհրդակցեցան ու որոշեցին եկե-ղեցւոյ բակը ազդարարութիւն մը կախել, որուն մէջ նշանակուի ի Պօլիս Պատրիարքի ընտրութեան օրը Ազգային ժողովոյ կողմէ չըջարեութեան և-լած հրամանին պատճէնը, որ է պատարագի ատեն անոր անունը յիշելու և աւելցուի թէ ո՛վ որ այդ հրամանը փոխել կ'ուզէ, թո՛ղ Պօլսոյ Ազգ. ժող-վէն պահանջէ անոր փոխութեանը, վսեմ զի Գահիրէի Առաջնորդարանը ստորագրուած մարմին մ'է որ պարտաւոր է կեդրոնէն եկած որոշումին և:

- 2) Լա Հէյի համաժողովին քաշած հեռագրին համար ըսել կ'ուզէ:
- 3) Բողոքական և կաթոլիկ ազգայինները անշուշտ հասկցնել կ'ուզէ:
- 4) Թերթերու անցեալ շաբաթ առուր թը-ւոյն Ազգային Լոյց մասին մէջ ծանօթ հանրագրի վրայ խօսելով գրած էինք թէ չորս պատգամա-ւորներէն երկուքը ստորագրութիւններն ետ առած են: Ի վերջոյ ստոյգ աղբիւրներէ տեղեկացանք թէ չորսէն մին միայն ստորագրութիւնը ետ ա-ռած է և ոչ թէ երկուքը: Ծ. Խ.

հրամանին համակերպելու և ո՛չ թէ հրամայելու: Եւ ժողովը ստիկանութեան նամակ գրելով խնդրեց որ ստիկանապետ մը, երկու բոլիս և վեց զինուոր զրկէ, կիրակի օրը կարգապահու-թեան հսկելու և Եկեղեցւոյ մէջ ո՛ր և է խոռ-վարար ցոյց արգիլելու համար:

Ուստի անցեալ կիրակի (17 սեպտ.) ժամը-գութիւնը սկսելուն Խալապի բոլիս մը կար Եկե-ղեցւոյն մէջ և գուրսն ալ իւր զինուորները՝ Վե-րոյիշեալ ազդարարութիւնն ալ կախուած էր Ե-կեղեցւոյ բակը: Բայց երբ Պատրիարքի անուան յիշատակութեան ատենը եկաւ, գաղթականներէն մին գիտողութիւն ըրաւ, սակայն պատարագի քահանան անոր հակառակ՝ Պատրիարքին անունը յիշեց: Երբոր գուրս՝ բակը ելան, գաղթականնե-րուն և Տէր Մամբէի միջև վէճ ծագեցաւ, ու-րուն միջամտեց Խալապի բոլիսը՝ ներկայ եղող-ները Բոլիսին ըսին թէ իրեն հետ գործ մը չունին, և հարցուցին թէ ի՞նչ ընելու համար իրենց Եկե-ղեցին մտած է, քանի որ իրենց հասարակութե-նէն չէ:

Նոյն օրը, երեկոյն ստիկանութիւնը գաղ-թականներէն 30ի չափ մարդ ձերբակալեց, միւս-ները սպասեցին մինչև կէս գիշեր, յետոյ մեծ թաղմութեամբ գացին Եկեղեցւոյ դուռը ափ ա-ռին և յահանան ուղեցին՝ յայտնելով թէ հոգե-ւարք վիճակի մէջ հիւանդ մը կայ որ պիտի հա-ղորդուի: Երբոր գուրս բացուեցաւ ամենքն ալ քահանային քովն ելան և ըսին որ ելնէ ու ի-րենց հետ գալով իրենց ընկերները բանտէն հանէ: Քահանան անպարեք անոնց հետ երթալ և բան-տարկեալներուն արձակուելը խնդրեց, սակայն պատասխան տրուեցաւ թէ ատիկա անկարելի էր գիշերուան այդ պահուն, և հետեւեալ առաւօտ ամենքն ալ արձակուեցան:

Իմացանք թէ քաղաքին կառավարիչը յոր-գորիք է գիշերը որ հանդարտ կենան, հակառակ պարագային երկրէն պիտի արտաքսուին:

Այսօր, կէս օրէ վերջը ժամը հինգին Քաղա-քական ժողովը ի նիստ պիտի գումարի սոյն խնդ-րոյ մասին խորհրդակցելու համար:

Թէ՛ ժողովը և թէ՛ տեղացի հայերը կը պըն-դեն Պատրիարքին անուան յիշատակութեան վը-րայ (5), իսկ գաղթականները կը պնդեն թէ պէտք չէ յիշուի Հակառակութիւնը սաստկացած է, կուրծքերը ուռած են և հետեւանք խիթալի է:

Արդ կ'ըսուի թէ տեղացի և գաղթական Հայոց միջև խուլ հակառակութեան շարժառիթը Վսեմ. Տիգրան փաշայի ընթացքը եղած է, որով ուզած է գաղթականները իրենց երկիրը քշել, ինչ որ պահանջեց Բրէստէն նազըը հանրմ, երկու տա-րի առաջ, Մապէյի բաղձանաց գոհացում տալու համար:

Սակայն այդ ջանքը ի գերեւ ելաւ, ինչպէս որ վաղը մանրամասնօրէն պիտի պարզենք, եթէ Տէրը կամենայ (6):

### ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 Երևաններէ բաղկացած այս գրքոյ-կը կը պարունակէ Պերճի (Մ. Տամասեան) հայրենասիրական ոտանաւորները:

Գին 5 փուլ օղջ  
Կը գտնուի խմբագրութեանս քով:

5) Ինչպէս կը տեսնուի, յօդուածին ամբողջ պարունակութեան մէջ միշտ գաղթական անունը յիշուած և տեղացի հայերը այս կէտին մէջ ա-նոնց հակառակ ցոյց արուած է:

Սակայն ատով ժողովոյ բանիմաց անդամնե-րը յաչս օտարաց չէ թէ գաղթականները, այլ յանդէտս տեղացի հայերը անպատուած ու նախա-տած են՝ իբր անդգայ անտարբերներ: Ըստ որում խնդիրը ազգային և ուխտագրութ Պատրիարքի մը չուրջը կը դառնայ:

6) Սոյն գրութեան շարունակութիւնը եղող երկրորդ յօդուածին թարգմանութիւնը յաջորդ թուով: Ծ. Խ.

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ կը հաղորդուի թէ Խաչկերացի Կիրակէ օրն 12/24 սեպտ. Արժ. Տէր Եղ-նիկ քահանայ Պալուսի պաշտօնական թղթի վրայ յայտարարութիւն մը կարգացած և բերանացի բացատրութիւններ ալ տուած է:

Ահաւասիկ եզած յայտարարութեան իմաստը:

Կ. Պօլսոյ Ամեն. Ս. Պատրիարքի ա-նունի յիշատակութեան խնդրոյ առթիւ արուած հանրագրութիւնը ստորագրողնե-րէն կը խնդրուի որ առաջիկայ հինգաբարձի օր կէս օրէ ետք ժամը կին հինգ կամ եօթն անձէ բաղկացեալ պատգամաւորու-թիւն մը գրկեն Ազգ. Առաջնորդարան, ուր արտաքոյ կարգի Խառն ժողով պիտի գու-մարուի:

Ժողովը խորհրդակցելով պատգամա-ւորութեան հետ, միանգամ ընդ միշտ պի-տի կարգադրէ ու վերջացնէ յիշատակու-թեան և ուրիշ խնդիրները:

Փափաքելի էր որ այդ Խառն ժողովը գընըաց տեղի ունենար Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ և ժողովուրդէն ալ ունկրն-դիրներ գտնուէին, ինչպէս որ սովորութիւն է Կ. Պօլսոյ և ուրիշ տեղերու մէջ:

Շարժումի Կ. Պօլսոյ թղթակիցը 27 օգոստոս թուականաւ կը գրէ:

Քանի մը օր առաջ Պատրիարքարան հասած է Եգիպտահայոց գանդատները:

Սա՛ խնդրոյ տուարկայ ծանօթ հան-րագիրը ըլլալու է:

### ԾԵՕՐԸՐ-ՔԷՍՆԵՐ

Տրէյֆիւսի ներման լուրը հաղորդում միջոցնուն հեռագրական գործակալութիւն-ները միւսնոյն ատեն մեղ կ'իմացնեն Մե-րախոյտի անգամ Շէօրըր-Քէսնէրի մահը: Այս անձն էր որ առաջին անգամ պաշտօ-նապէս յայտարարեց թէ Տրէյֆիւս անմեղ է, և վերաքննութեան պէտքը չառագովեց ժողովոյ առջև յանուն արգարութեան:

Հետեւեալ կենսագրական ծանօթու-թիւնները կը քաղենք օտար թերթէ մը:

Քիմիագէտ և գաղղիացի ծերակուսա-կան Պ. Շէօրըր-Քէսնէր ծնած է ի Միւլ-հաուզ 1833 փետր. 11ին: Քիմիագիտու-թեան ուսումը աւարտեց Փարիզի Բժշկա-կան վարժարանին մէջ, և յետոյ Թանի մէջ աներջը՝ Պ. Քէսնէրի ճարտարաբու-տական հաստատութեան տեսչութիւնը ըս-տանձնեց: Կայսրութեան օրով (1870 էն 3 տարի առաջ) իւր հանրապետական գաղա-փարներուն համար չորս ամիս բանտարկու-թեան և 2000 ֆրանք տուգանքի դատաւ պարտուեցաւ:

Գործաւոր դատուն վիճակին բարու-քումը միշտ իւր մտազբազումին առարկայ ըլլալով՝ 1863ին սպառելի նիւթերու (ու-տեղիք խմբիք) գործակցական ընկերու-թիւն մը հիմնեց:

1870ի միջոցները Պոստոյի պատուի-րակութեան կողմանէ Սէթթի հրարուեալ

տական հաստատութեան տնօրէն անուանուեցաւ Ապա 1871 փետր. 8ին Վերին Հրահանգի ներկայացուցիչ ընտրուեցաւ այդ գայլին ժողովին մէջ:

Հաշտութեան նախաշաւիզ պայմաններուն գէտ քուէարկեց և Ալզաս դաւառը Բրուսիոյ թողուէն վերջը՝ ինքն ալ ընկերներուն հետ քաշուելով հեռացաւ անկէ:

1871 յուլիս 2ին Սէնի վիճակէն դարձեալ երեսփոխան ընտրուելով հանրապետական միութեան խմբակին յարեցաւ, որուն հետ միասին քուէարկեց և ընդունեց Վալընի օրէնքին բարեփոխումը և սահմանադրական օրէնքներուն ամբողջութիւնը:

Յիշանա պաշտօնավարող ծերակուտականներու ընտրութեանց ատեն 681 քուէարկողներուն մէջէն 341 ձայնով ծերակուտական ընտրուեցաւ:

Ծերակոյտի ժողովին մէջ 1876ին քարտուղար, և յետոյ դեր-նախագահ եղաւ: Սակայն Տրէյֆիւսի գործին մէջ բռնած ընթացքին պատճառաւ այդ պաշտօնները այլ եւս չչարունակեց:

Ինքը որ Լա Ռեքլայշիֆ Փրանսէզ անուն թերթին վարչական ժողովոյն նախագահն էր, Կամպէթթա երեսփոխաններու գահիճին նախագահ ընտրուելուն՝ յիշեալ թերթին տնօրէն եղաւ:

Տրէյֆիւսի գործին մէջ Շէօրըր-Քէսնէրի կատարած գերը ամենուն ալ յիշողութենէն չնչուած չէ գեռ: Ամեն մարդ գիտէ թէ յարգելի ծերակուտականը առաջին ժամուն սատարողը եղաւ: Առաջին գործիքը եղաւ որ 1894ի դատաստանին մէջ՝ ակներ պայթեցնող առաջին հարուածը տուաւ:

Ամէն ոք գիտէ նաև թէ իւր անվահեր ընթացքը, նախարարներուն ըրած դիմումները, հանրային իշխանութեանց քով ըրած թախանձանքը, Զօլայի դատին մէջ իր երեւումը ո՛րքան սուղի նստան իրեն:

Եւ ոչ թէ միայն այսօր, յորում Տրէյֆիւսի ներում կը շնորհուի, այլ միշտ պարտինք յիշել թէ Պ. Շէօրըր-Քէսնէր իսախոսողի ճամբայ մ'ընթացաւ:

Բայց այդ չարչարանքին փոխարէն, ի՞նչ վարձատրութիւն:

Վերջին շունչը տալէ առաջ եթէ կարողացաւ իր ջանքերուն արդիւնքը գիտնալ կամ ընդշնչարել, կրցաւ ուրեմն գոհ սրտով մեռնիլ:

ԾՈՎՈՒՆ

Երբեմն նստած ծովու ափին մօտ լըռին, Դիտեմ երկա՛ր ալեաց ճերմակ փրփուրներ. Գուցէ աղոնք են անհունին արցունքներ, Որ բարեկամ եղրի մը գոգ կը թափին...:

Եկո՛ւր, խօսէ՛ հողուոյս, դու ծո՛ւլ, մե՛ծ անհուն, Սիրեմ լսել մեռչիւններդ կատաղի. Սիրեմ տեսնել ես արցունքներդ դաւն, աղի, Իմ սրտիս մէջն ալ մե՛ծ վիշտեր կան թագուն:

Սօսէ՛, գոռա՛ մառնչներովդ ա՛նարկու. Երգ չեմ սիրեր. երգս ալ մառնչ մէ՛ արգէն, Բողոքներ են, որ կը ժայթքեն մեր սրտէն ճակատագրին դէմ անիրաւ ու քսու:

Բայց քեզ համար ծանօթ ափեր իրիստ շատ կայ, Երբ սրտիդ մէջ գոռայ յուզմանց փոթորիկ,

Կ'երթաս պոթկալ ու լալ ափանցդ դու ի գիրկ, Երբ մեծ վիշտեր ուռեցնեն լանջդ հոկայ...:

Եւ դուն ո՛հ ծով... դուն երջանիկ ես քան զիս. Իսկ ես որո՞ւ պատմեմ վիշտերս բերաւոր. Կեանքս ամառի. ու ես սխուր, մինաւոր, Ո, ո՞ւ գոգը թափեմ, արցունքն իմ ա. քիտ:

Սիրոս ալ անհուն, անյատակ է քեզի պէս, Լանջիդ խորերն մարդիկ կարո՞ղ են չափել. Եւ կամ ալեացդ թագուն գաղանիքն քրքրել. Կրնա՞ն գիտնալ, ինչե՛ր կ'անցնին իմ սրտէս...:

Որքան գաղտնիք որ ալեացդ մէջ կը պահուի, Նոյնքան սրտիս ծաղրերուն տակ յուզումներ. Հողուոյ մէջ վիճա... աչքերուս մէջ արցունքներ. Որ պիտ'ցամքին դուցէ՛քու. Չուրդերբցամքի՛...:

Եկո՛ւր ո՛հ ծով. իմ բարեկամս եղիր դուն, Ըսէ՛ ինձի, քու ափերուդ մօտ ծանօթ, Տեսա՞ր արգեօք իմ սիրելիք, ոյց կարօտ Սրտիս խորէն խլէ հառաչք բեր, թագուն:

Եկո՛ւր, դնեմ լանջիդ վրայ իմ ճակատ, Փրփուրներուդ խառնեմ իմ գաւն արցունքներ. Թո՞ղ ալիքներդ տանին իմ տաք համբոյրներ Այն ափերուն՝ ուր սիրելիքս մնան արդ...:

Աղիքսանդրիա ՄՍՈՒԻ

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ն. Ե. Բ

ԳԱՀԻՐԷ, 6)18 Սեպտ. 99

... Սիրագիր,

Արեւոյսի 1)13 Սեպտ. 13րդ թուոյն մէջ լաց նամակի մը Գրիս ստորագրութեամբ մէկ յայտարարութիւնը կարգացի, որ կ'ըսէ եղեր այդ ծածկանուն մարդը իւր կեղծ ու կեղտ նամակին մէջ թէ՛ ևս անցեալ կիրակնօրեայ ծանուցմանս մէջ այն աստիճան արտաոտց գաղափարներ յայտնած եմ որ, ժողովրդեան արգահատանք աղքեղէ կատ, գայթակղողից երեւոյթներու ալ պատճառ եղած եմ: Թէ՛ ևս բացազանչութիւններ ու յոխորտանքներ թափած եմ զիս զգացման հրաւիրող երիտասարդի մը՝ որ, ապա սպառնացած է եղեր ինձ, «անոնց պատասխանը դուրսը կարող եմ առնուլ» ըսելով: Թէ՛ արարողութեանց աւարտումէն յետոյ զիս փնտրելու եղեր են, իմ փքուն խօսքերուն պարտ ու պատշաճ պատասխանը տալու համար, ու գործադարար չին գտեր:

Արդ՝ կուգամ յայտարարելու խմբագրութեանդ՝ որ այդ փքուոտց պարտին ազդարարէք թէ՛ ևս այն օր յետ աւարտման ժամիրգութեանց, բացը՝ Եկեղեցիին մէջն էի, ու ոչ ոք եկաւ ինձ փրնտուելու, կամ ո՛ր եւ է բան մը ըսելու. բացարձակ պոռոտաստութիւն, եւ ինչ որ պիտի ասէր, կարող էր գարձեալ գալ, ասել ու պատասխանն առնուլ:

Գալով միւս մասերուն, եթէ ճշմարիտ էին պարտին ինձ նկատմամբ գրածները, ինչո՞ւ ուրեմն ծածկած էր իւր անունը, զի ըստ աւետարանին, «որ գնայ ի գիշերի, նա անօրէն է ու գայթակղիչ»: Այլ եւ. ամօթ չէ՛ այդ ահարկու հերոսին, որ այսպէս ամէն լսած սօսաւիւնը՝ որտուտմ եւ ամէն տեսած ճնճղիկը՝ փիկ կը կարծէ: Եթէ այդպիսիներն են մեր ազգին փրկութեան առաջնորդները, յիշուի՞, չ'իշուին որոշողները, երնէ՛կ մեղի:

Բայց ասացէք այդ Գրիս անունին տակ ծածկուող անձնաւորութեան, թէ՛ ևս անարժանաբար յօրէ անտի ձեռնադրութենէս, այն ինչ հայր հասարակաց կարգեցայ ու հովուական կոչումն առի, այն օրէն՝ այո՛, ուխտ ու պայման կնքեցի առաջի վարդապետիս և բազմութեան ժողովոյն, զնել զանձս յօգուտ ազգիս և հայրենաց և երբէք չխտովիլ նոցա հանգիստն ու խաղաղութիւնը, իմովսանն, ըստ հողուոյ թէ ըստ մարմնոյ:

Հետեւաբար ըստ կոչման նուիրական պարտականութեանս, եւ իրիւ ուխտեալ զինուորսանն Աստուծոյ և Եկեղեցոյն, Սրբազան խորհուրդի ատեն եղած անպատշաճ տարածայնութիւնները յուզութիւն անկու համար, իրաւունք

ունէի, եւ ըրի, յղբուշտութիւն և ի խաղաղութիւն հրաւիրելու այն թիւր գնացքով սարդուած գողայինները, որ փոտած գաղափարներով տոգորուած կը գործեն, ազդութեան գէտ հակասամանադրակալ(՝) ընթացք մը բռնած:

Որ եւս աշխարհի խաղաղութեան համար՝ Տէր Ողորմախ ծանուցումէս հետեւեցաւ ու բացատրեցի համառօտիւ մը, պահ մը առաջ կրգուած Ողջոյնի կոչումը, յիշեցնելով թէ, Գրիստոնէական Եկեղեցին ի՞նչպէս կը հրաւիրէ զիրենք ի համբոյր սրբութեան. թէ՛ կը կոչէ խոռվայոյզներն ի ձայն խաղաղութեան, թէ՛ կ'ազդարարէ չ'կանգնել հաշտարար պատարագին դիմաց այն հաւատացելոց, որ վշտացուցեր են իրենց եղբայրները, որ անիրաւութեան կնճիւղներուն իրենց խորհրդոց մէջ. որ քէն ու սի, խէթ ու վրէժ կը տածեն զէպ առ ընկերն իրենց սրտերուն մէջ. հուսկ ուրեմն, թէ՛ կ'ազդարարէ, այո՛, ողջոյնի ձայնը, որ այդ պահուն այնպիսիները ելլին առ գուրս Եկեղեցոյն և այնպէս աղօթեն, որպէս զի արգարութեան բարկութիւնը չ'բերին իրենց վրայ:

Արդ՝ կը հարցունեմ այդ Գրիս պարտին, որո՞նք են այս ըսածներուն մէջ յոխորտանքներն ու արտաոտց գաղափարները, որո՞նք են, որ ժողովրդեան արգահատանք աղքեր ու գայթակղութիւն երեւոյթներու ալ պատճառ տուեր են:

Սակայն, զարմանք չին ասոնք, քանի որ Աստուածորդեայ մը համար իսկ, որ միակ տիպարն էր բարոյականի, ազատ եղան կեղծաւոր փարիսեոյները, զչարող զպիտրին, սագովկեցի ու մարսեոյներ զնել և ասել զամենայն բան անօրէնութեան ի վերայ նորա:

Մեզ համար միթէ պակաս պիտի ըլլային սուտ ու պատիր թիրութիւններ յերկրող, շարք մը բասրանքներ սեթեւեթող ոգիներ, որոց կարգին է և անցեալ շաբթու 21)Չ Սեպտեմբերին Արեւոյսի 10րդ թուոյն մէջ Պ. Երուանդ ստորագրութեամբ «Բանաւայական այցելութիւնէ զուրկ տուն մը» վերնադրով յօդուածագիրը: Որովք պատճառ կուտայք ինձ, ցաւ ի սիրտ, յակամայից բունազատեալ, յայտարարելու ի լուր հանրութեան թէ՛ քահանայք ուր որ իմացեր և գտերն գաղթականաց քնակութեան վայրեր, իրենց այցելութիւնքը տուեր և չեն անտեսեր առանց ժամուցի ակնկալութեանս Սակայն՝ բացատրութիւնը յարգելով հանգրծ, կ'ամաչեմ ըսելու, թէ՛ նոքա շատ անպատշաճ ընդունելութեանց հանդիպեր, և շատերէ մերժուեր են զգրադարար: Ուրիշ մանրամասնութիւնք զանց կ'առնուի, որպէս զի արժանապատուութիւն վիրաւորող անհաճոյ զրից մէջ չ'գտնուիմ թէ՛ և ասոնց ալ կ'ուզէի լռել, չի հերքել, սակայն՝ հանրացած գայթակղութիւնք՝ որ անտեղի են և վայրապար, մի գուցէ վատ սպաւորութիւնք թողուն տոնմական խաւերու մէջ, ու աղին բարքեր մոլորցնեն. ստիպեցայ ի քնտրելնէ պաշտօնիս, գրել այնչափ, որչափ որ ներքին էր. վասն զի անհրաժեշտ պարտք կը զնէ ի մեզ Գրիստոս «Չ'գալ գայթակղութեան, եւ ոչ իսկ գայթակղեցուցանել զմի փոքրկանցս ի մէնջ. և վա՛յ մարդոյն այնմիկ՝ յոր ձեռն գայցէ գայթակղութիւն»:

Պ. Երուանդ՝ որ հարիւրաւորներու գայթակղութեան պատճառ եղած, և յանիրաւի զրպարտած էր գրահանայս, ուրեմն եսթակայն եղած է այն աւետարանական վայրին:

Եւ ի՞նչպէս լրջօրէն չ'մտածեց թէ՛ քահանայք դեռ մեր անունը, սանունը չ'զիտցած՝ այս մեծածաւալ ու բազմամարդ երկրին, հազարաւոր փողոցներով ու անկիւններով լցուած քաղաքին մէջ տեղերնին ուր ըլլալը ի՞նչպէս գիտնալ ու գալու են:

Գէթ այդ երեք տարուան մէջ թէ ինք, թէ ընտանիքը յիշելու չէին իրենց հոգեկան և կրօնական անհրաժեշտ պէտքը՝ մեղաց դարձը, խոտովանութիւնը, Ս. Հաղորդութիւնը, իբրեւ ջերմուտանք քրիստոնեայ. և է՛ր չ'եկան, չ'զիմեցին քահանայի մը, աւագերէց կուզէին, խաչակիր կու-

(՝) Վստահ ենք թէ հայ ժողովուրդը ամենէն շատ փափաքողը պիտի ըլլայ Սահմանադրութիւնը ճշդի գործադրուած տեսնել Եգիպտոսի և մասնաւոր Գահիրէի մէջ. որովհետեւ անոր գործագրութիւնը մինչեւ ցարդ տեսնուած չէ: Խ.

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

Գ Ա Հ Ի Ր Է ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ Գ. Է. ՄԷԼՎԱՃԵԱՆ Գ Ա Հ Ի Ր Է ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՇԵԱՆ

Վ.Ա.ԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՄՄԱՅՈՅՅԻՆԵՐՈՒ

ՊՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ, - Մուսի փողոց, - Գ.Ա.ՀԻՐԷ Ս. Ե. Ս. Սեզնովի վանքում գիմար

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ բոնուսի ընտիր տեսակէ բանախնդրու մեծ միջերք:

ԴԻՄՅՑԷՔ ՀՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամայոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւնի:

Փրանսական եւ ամերիկեան պարանայ ամենարժեք տեսակներէն զարդեղէններ, շրքաներ, օղեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամայոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ

17-50

ՏՕՊՕՏՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ Ակսիմ, Շարի Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր պարանքներով կեզծ ախաւներ:

Կը դադարեցնէ վայրկեանայէն ախաւյի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ախաւներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

6-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱՋԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տայիբի Սանիյի ցիւս գիմար

Ամենաբնախոր պարանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գինը չափաւոր եւ աժան: Փորձ մը միայն կը բուժէ:

9-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՐԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՍՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մանագրեր, Հարսիւրեր, Այցեխարտեր, Յանկեր, Կիրտեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց եւ փաստականներու սպագրական ամեն պիտոյներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները յարմարեցնելու ի գոհացնել գործերու մարքութեան, ճշգրտագրութեան եւ գնորու չափաւորութեան մէջ:

Եզրագրութիւնն ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr S. A. HAGOPIAN

զէին, պարզ քանակայ կուզէին. (այս տիւրգոսնէրը կը թուէ, վասն զի ոմանց ընտանիքներէ տիւրգոսնէր տաներէց ունեւալու սին փառասիրութիւններ ալ յաճեալ էր աւելի ճշմարտոր խօսելով՝ եթէ այդ պարտին զիտողութիւնը անկեղծ էր, ու նպատակը քանակայները բամբակի չէր, ինչո՞ւ գտնէ չէր նշանակած յողուածին մէկ անկեւոր իւր բնական փողոցին, տան տեղը, եւ թիւը որպէս զի քանակայ մը կը թար, թէեւ սխալ:

Որովհետեւ ընդհանուր օրէնք է. իւրաքանչիւր նորեկ ազգայինին զիտել նստապէս այն քանակային՝ որն որ կ'ուզէ ընել իրեն տաներէց, գիտցունել անոր իւր բնակութեան վայրը. եւ կրք թերանայ քանակայն իւր այցելութեան մէջ ու պարտազանց գտնուի, յայնժամ այո՛, ամէն իրաւունքը ունենայ պարտաւանքներ տեղալու:

Չնկարելի ալ եւ. Տիւր Խմբագիր, ձեզ եւ կած բայ նամակներուն կարգին համարելով եւ այս, հաճեցէք զետեղել թերթի մէկ անկիւնը, որով շատ քո՛ս պիտի կացուցանէք զիս, եւ թերթի յարատեւութեան համար իսկ աղօթարար: ԵԶՆԻԿ ԳԱՀԱՆԱՅ ՊԱՆՈՒՆԻ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի ԳԱՀԻՐԷ

ՆԵՐՔ ԶԻՒՂԻ ԲԱՅՆՈՒՄ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացոց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Պալէ:

Սղշկանց եւ Մանկապարտիզի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարքավի, Տալուտի:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Փրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի տրուի Անգղիերէնի:

Մանկապարտէզի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Մանրամասնութեանց համար զիտել, Տիւր Հաճի Փիլիպպոս Նազուպեանի ի Մէնչիլէ:

11-15

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Օռօգի Պալ վանքումսան օտերը, Կաւե-է-Պեմաթի ցիւս գիմար:

ԵՎԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուռին մէջ, անխարդախ ալիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաններ, եւ այլն:

Եկաւօք եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց զիտող բոլոր յաճախորդներն ըստ ամենայն գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին:

1-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Վկայեալ տեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանին

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապտիւլ-Ալիգ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմար:

Նրկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կրթալի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն զիտողները կատարելապէս գո՛հ պիտի մնան:

4-24